# ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՇՐՋԱՆՆ ՈՒՆԻ 615 ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻ

*2017-2018 ուսումնական տարին մեկնարկեց նաեւ Ախալքալաքի մունիցիպալիտետում: Այս տարի շրջանի 65 հանրային դպրոցներն իրենց գիկն առան 615 առաջին դասարանցիների, որոնք ապահովվեցին «Իմ առաջին համակարգիչ» ծրագրի շրջանակներում Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության կողմից տրամադրվող համակարգիչներով եւ դասագրքերով:*



Շրջանի 65 դպրոցներից 55-ում կատարվել են տարբեր ծավալի վերանորոգչական աշխատանքներ: Հիմնովին վերանորոգվել է Ախալքալաքի թիվ 4 հանրային դպրոցը՝ «Միլենիում» ծրագրի շրջանակներում: Վերանորոգման ընթացքի մեջ է նաեւ Կարտիկամ գյուղի հանրային դպրոցը, որի աշխատանքները կավարտվեն մոտ ժամանակներս:

Հիմնովին նորոգվեցին բնական աղետի պատճառով վնասված Սուլդա եւ Կարծախ գյուղերի դպրոցների տանիքները: Գազիֆիկացվեց Վարեւանի դպրոցը, իսկ Բալխո գյուղի դպրոցը, որն ուներ ընդամենը յոթ դասասենյակ, եւ դասընթացներն ընթանում էին երկհերթ, այժմ կունենա նորերս կառուցված եւս երկու դասասենյակ:

Նշեմ նաեւ, որ Ախալքալաքի 2 դպրոցներում վերակառուցվեցին բուժկետեր: Եվ թերեւս ամենակարեւորը՝ շինարարական ծրագրի մեջ մտավ շրջանի երկու նոր դպրոցների կառուցում՝ Պտենա եւ Ափնյա գյուղերում:

Եվ վերջում, ուզում եմ շնորհավորել կրթական ոլորտի բոլոր աշխատողներին, դպրոցականներին, հատկապես առաջին դասարանցիներին, մաղթել երջանկություն, առողջություն եւ նվաճումներ գիտության բնագավառում: Փոքրիկների պարզ ու մաքուր ժպիտը թող երբեք չխամրի, իսկ ապագա ուղին միշտ հարթ ու կանաչ լինի:

***ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ***
*Ախալքալաքի ռեսուրս-կենտրոնի տնօրեն*

# ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ ԱՎԵՏՈՂ ՂՈՂԱՆՋԸ...

*Սեպտեմբերի 15-ին, Մառնեուլիի մունիցիպալիտետի Շահումյան ավանի թիվ 1 հանրային դպրոցում ղողանջեց առաջին զանգը եւ նշվեց գիտելիքի օրը:*



Միջոցառման կազմակերպիչ Խանում Ավանյանը ջանք չէր խնայել տոնական բարձր տրամադրությունն ու ուրախ անակնկալներն ապահովելու համար: Ներկաներին իր ողջույնի խոսքը հղեց տնօրեն Արտուշ Ուռումյանը, բարեմաղթելով ուսումնառության խաղաղ ու բնականոն ընթացք:

Ուսումնական առաջին օրը, իհարկե, սպասված էր մեր կրթօջախի բոլոր սաների համար, եւ սակայն առավել բազմախորհուրդ ու հետաքրքիր էր՝ քսանհինգ ժիր ու կայտառ առաջին դասարանցիների եւ նրանց դասղեկի՝ Անահիտ Նադիրյանի համար: Նրանցից յուրաքանչյուրի համար օրը գեղեցիկ ու անմոռանալի ապրումների մի մեծ ալիք էր բերել՝ ծաղիկներ, նոր դասագրքեր, համակարգիչներ... թվում էր, գիտակցում են, որ գալիս են ուսման մեջ մշտապես բարձր ցուցանիշ գրանցած ու հանրությանն արժանի քաղաքացիներ նվիրած մի դպրոց, որտեղ սովորում է այսօր 242 աշակերտ, շրջանավարտներից յուրաքանչյուրը 100%-ով հանձնել է իր ավարտական քննությունը, իսկ 6-ն ընդունվել է Վրաստանի եւ Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններ, ըստ որում 3-ը՝ անվճար: Ի դեպ, նրանցից յուրաքանչյուրը դպրոցին հրաժեշտ տվեց տնօրենի կողմից մատուցված հուշանվերով: Հավելենք նաեւ, որ ուսումնական այս տարի Վրաստանի բուհերում իրենց ուսումնառությունը կավարտեն մեր դպրոցի 15 շրջանավարտներ, որոնցից 7-ը՝ անվճար: Լիահույս ենք, որ նրանց մի մասը գոնե հայրենի գյուղում կօգտագործի մասնագիտական կարողությունները:

Մեր դպրոցն ունի 118 տարվա պատմություն, այսօր դպրոցում դասավանդում է 35 մանկավարժ, մասնագիտական պակաս չունենք: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորի եւ մասնավորապես, հարազատ կրթօջախիս նոր ուսումնական տարին: Թո'ղ ամեն տարի այս հնամենի կրթօջախի կամարների ներքո ղողանջի առաջին զանգը, համախմբելով հայ մանուկներին ու նրանց կրթման գործը առաջնային դարձնող մանկավարժներին:

***ՆԵԼԼԻ ՉՈԲԱՆՅԱՆ***
*Շահումյան ավանի հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի*

# ԱՌԱՋԻՆ ԶԱՆԳԸ՝ ԲՈԼՆԻՍ-ԽԱՉԵՆՈՒՄ

Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցում գիտելիքի առաջին օրը դիմավորում էր ողջ գյուղը: Այս օրվան եւ հատկապես, գյուղում, երկար են սպասում: Այդ է պատճառը, որ սրտի մեկ այլ տրոփյունով են գալիս եւ ոչ միայն երեխաները, այլեւ՝ մենք մանկավարժներս, ծնողները: Ու ամեն անգամ Աղայանական ծննդավայրը ցնծում է միասին, իր մեծ հայորդու պատգամին հավատարիմ ու վայել: 130-ից ավելի տարիների պատմություն ունեցող մեր մեծ ընտանիքում օրն անցավ հանդիսավոր ու տոնական՝ երգ ու պարով, ասմունքով: Հետո արդեն առաջին զանգը հնչեց ու մասնավորպես նշանավորվեց 24 նորեկի՝ առաջին դասարանցիների համար: Երեւի այդ էլ նվաճում էր, որ անցած տարի 19 հոգուն, այժմ փոխարինում էր՝ 24-ը: Դպրոցի յուրաքանչյուր մանկավարժ իր նոր հույսն էր կապում այս փոքրիկների հետ, նորովի վերաիմաստավորում դպրոցի գալիք օրն ու ուժ առնում: Չէ՞ որ Բոլնիս-Խաչենը մեկ անգամ չէ հռչակվել իր անվանի զավակներով, որոնք հենց այս դպրոցում են կրթվել ու որպես անհատ ձեւավորվել: Ինչ վերաբերում է նախորդ ուստարվա շրջանավարտներին, ապա 15 հոգուց 6-ն ընդունվել են Վրաստանի եւ Հայաստանի բուհեր, մյուսները՝ մասնագիտական ուսումնարաններ: Ասեմ նաեւ, որ դպրոցի կազմում է գործում մեր գյուղից 10 կմ հեռավորության վրա գտնվող Կիանեթիի 9-ամյա դպրոցը: Մեր կրթօջախի աշակերտների ընդհանուր թիվը 210 է, ունենք 32 մանկավարժ եւ ոչ մի մասնագիտական պակաս: Նախորդ տարի վերանորոգվեց դպրոցի տանիքն ու փոխվեցին պատուհանները: Այս պահին դռների, հատակի ու նաեւ ներքին հարդարման կարիք ունենք:



Ինչեւէ: Կրթական եռուզեռն իր հունն է առել՝ ուրախալի տեղաշարժով, որ կապված է ուսումնական դասագրքերի հետ: Այս տարի ամեն ինչ ճիշտ ժամանակին եւ համապատասխան քանակով մատակարարվեց, այս հարցում շնորհակալ ենք Վրաստանի եւ Հայաստանի կրթության եւ գիտության նախարարություններին ոչ միայն գրքերի եւ համակարգիչների մատակարարման, այլեւ դպրոցը անհրաժեշտ գույքով եւ դասագրքերով ապահովելու համար:

Շնորհավորում եմ բոլորիս, մաղթում ուսումնառատ ու նվաճումներով լի տարի:

***Մեխակ Սարգսյան***
*Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի տնօրեն*

# ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՎ ԼԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

*Սեպտեմբերի 15-ին առաջին զանգը հնչեց Նինոծմինդայի մունիցիպալիտետի 38 (30 միջնակարգ, 8 բազային) դպրոցներում եւ նոր՝ 2017-2018 ուսումնական տարվա մեկնարկն ազդարարեց 3885 աշակերտների համար, որոնցից 315-ն առաջին դասարանցիներ են:*

Կրթօջախները կազմ ու պատրաստ իրենց սաներին դիմավորեցին բարիգալստյան ողջույններով ու ուսման հանդեպ սիրով լցվելու հորդորներով: Քաղաքի թիվ 1 եւ թիվ 3 դպրոցներում գովասանագրերով պարգեւատրվեցին նախորդ ուստարվա լավագույն աշակերտները: Նոր ուսումնական տարին տոնական միջոցառումներով մեկնարկեց Օրոջալարի, Ժդանովականի, Հեշտիայի, Գորելովկայի հանրային դպրոցներում: Բոլոր առաջին դասարանցիներին եւ նրանց դասվարներին հանդիսավոր պայմաններում հանձնվեցին Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության նվեր-նոութբուքերը: «Իմ առաջին համակարգիչը» նախագծի շրջանակներում անհատական համակարգիչներով պարգեւատրվեցին նաեւ 2016-2017 ուստարվա բազային աստիճանը գերազանց ավարտած 24 աշակերտներ: Նշենք, որ շրջանի բոլոր դպրոցների 7-8-րդ դասարանների լավ սովորող աշակերտներն ամառային արձակուրդներին մասնակցել են ճամբարների Բաթումիում, Քութայիսիում, Ծղնեթիում, եղել տեսարժան վայրերում, ծանոթացել մեր երկրի պատմությանն ու մշակույթին:



Ինչպես տեղեկացանք Նինոծմինդայի ռեսուրս-կենտրոնից, նախորդ ուստարվա մեր 350 շրջանավարտներից 8-ն արժանացել են ոսկե, 9-ը՝ արծաթե մեդալների: Նրանցից շատերը բավական լավ ցուցանիշներով ընդունվել են ինչպես երկրի, այնպես էլ՝ Հայաստանի ԲՈՒՀ-եր:

Մեր մանկավարժներն էլ ընդհանուր առմամբ լավ են հանձնել ե'ւ առարկայական, ե'ւ ընդհանուր ունակությունների քննությունները, մի քանիսն արժանացել են ավագ մանկավարժի կոչման: Այս ուսումնական տարում մունիցիպալիտետի դպրոցները համալրվել են երիտասարդ եւ սերտիֆիկացված կադրերով:

Ռեսուրս-կենտրոնում հետաքրքրվեցինք նաեւ դպրոցների վերանորոգման եւ ջեռուցման հարցով: Հիմնովին վերանորոգման են ենթարկվել Գանձայի թիվ 1 եւ Փոքր Գոնդուրայի դպրոցները, շուտով շահագործման կհանձնվի «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի ֆինանսավորմամբ կառուցված Սաթխայի դպրոցի նոր շենքը: Մասնակի վերանորոգման աշխատանքներ են կատարվել մնացած բոլոր կրթօջախներում եւ դրանց որոշ մասը գազիֆիկացված է, մյուսները դեռ ջեռուցվում են վառարաններով:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի էլ բոլոր դասագրքերն աշակերտներին բաժանվեցին անվճար: Ի ուրախություն մեզ, դպրոցները վերջապես համալրվեցին 1-9-րդ դասարանների «Հայոց լեզվի եւ գրականության» դասագրքերով:

Սպասումները լի են, իսկ սկիզբը՝ խոստումնալից: Մաղթում ենք ձեռքբերումներով լի ուսումնական տարի:

***ԼՈՒՍԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ***
*ք.Նինոծմինդա*

# ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ ՂԶԼՔԻԼԻՍԱ ԳՅՈՒՂՈՒՄ ԿԲԱՑՎԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

*Ուսումնական տարին իր երթն է սկսել եւ դպրոցներում ապահովել աշխատանքային ավանդական եռուզեռը:*

Ծալկայի մունիցիպալիտետի 13 հայկական դպրոցներում սեպտեմբերի 15-ն այս տարի մի նոր շնչով է սկսվել: Տարիների արտագաղթը, որ սովորական էր դարձել հատկապես վերջին շրջանում, փոքր-ինչ դադար է գրանցել: Շրջանի հայկական դպրոցներն այս տարի ունեն 82 առաջին դասարանցի, մինչդեռ նախորդ տարի թիվը զգալիորեն պակաս էր: Ամենամեծ խթանը շրջանում տարվող վերանորոգչական աշխատանքներն են, որոնք իրականացվում են մունիցիպալիտետի ղեկավարության եւ տեղի բարերարների կողմից. ասֆալտապատվում են ճանապարհները, կարգավորվում ջրի եւ գազիֆիկացման հարցերը:

Այսպես, Ղզլքիլիսայի հանրային դպրոցն այս տարի ունի 17 առաջին դասարանցի, աշակերտների ընդհանուր թիվը 150 է: Նախորդ տարի 13 շրջանավարտներից 3-ն ընդունվել են Վրաստանի եւ Հայաստանի բուհեր, մյուսները՝ մասնագիտական ուղղվածության հաստատություններ: Ամռան ընթացքում, մեր գյուղի նվիրյալներ Էդգար Արամյանի եւ Կարեն Քուչուկյանի հովանավորությամբ տեղադրվեցին եվրոպատուհաններ եւ դռներ: Վերանորոգչական աշխատանքներ ընթացան նաեւ Նարդեւան գյուղի հանրային դպրոցում՝ Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Կախա Օքրիաշվիլիի նյութական աջակցությամբ: Հիրավի, այս ամենը մեծ խթան է դառնում, որպեսզի տեղի բնակչությունը շարունակի ապրել ու արարել իր ծննդավայրում: Օրինակ, Ղզլքիլիսայում նույն Էդգար Արամյանի հովանավորությամբ մարզադահլիճ է գործում, ինչպես նաեւ բուժսպասարկման ծառայությունը՝ հրավիրված մասնագետների աշխատանքային սկզբունքով: Երիտասարդները զբաղվելու տեղ ունեն եւ այն էլ առողջ կենսակերպին նպաստող: Իսկ տարվա ամենակարեւոր նորությունը, թերեւս այն է, որ, ըստ նախատեսվածի, դեկտեմբեր ամսին Ղզլքիլիսայում կբացվի մանկապարտեզ:

***ՎԱՐՍԻԿ ՂՈՒԼԻԿՅԱՆ***
*Ծալկայի մունիցիպալիտետի Ղզլքիլիսա գյուղի հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՕՐԵԱԿԱՆ

# ԱԼԿՈՀՈԼԸ՝ ՉԱՓԱՎՈՐ

*Շատ եմ լսել, որ չափավոր ալկոհոլը օգտակար է: Հետաքրքիր է, որքա՞ն է ալկոհոլ ընդունելու չափը:*

*Մ.Սարգսյան*
*Ախալքալաքի*



Առողջության պահպանման գլխավոր պայմանը չափավորությունն է: Իսկ որքա՞նն է չափավոր: Մարդկանց մեծամասնությունն այն կարծիքին է, թե ալկոհոլը չափավորությամբ են օգտագործում: Նրանք, հավանաբար, մտածում են, որ եթե չեն հարբել կամ դարձել ալկոհոլամոլ, ապա որեւէ խնդիր այս առումով չունեն: Իսկ Եվրոպայում յուրաքանչյուր չորրորդ տղամարդն այնքան ալկոհոլ է ընդունում, որ նրան կարելի է հարբեցող համարել:

Ըստ տարբեր աղբյուրների՝ ոգելից խմիչքների չափավոր քանակություն է համարվում օրվա մեջ 20 գրամ մաքուր ալկոհոլը՝ տղամարդկանց, եւ 10 գրամ՝ կանանց համար: Ֆրանսիայի եւ Բրիտանիայի առողջապահության ոլորտի մասնագետները թույլատրելի են համարում երեք բաժակ ոգելից խմիչքը՝ տղամարդկանց, ու երկուսը՝ կանանց համար: Իսկ ԱՄՆ-ի՝ Ալկոհոլի չարաշահման եւ ալկոհոլամոլության ազգային ինստիտուտը խորհուրդ է տալիս 65-ից բարձր տարիքի անհատներին սահմանափակել ալկոհոլի գործածությունը՝ օրվա մեջ խմելով 1 բաժակ: Պետք է նշել, սակայն, որ տարբեր մարդիկ տարբեր դիմադրողականություն ունեն ալկոհոլի նկատմամբ: Որոշ դեպքերում չափազանց բարձր կարող են լինել անգամ այս ցածր նորմերը: Օրինակ՝ չափավոր քանակությամբ ալկոհոլը կարող է վնասակար լինել հուզական եւ տագնապային խանգարումներ ունեցողների համար: Նաեւ պետք է հաշվի առնել մարդու տարիքը, հիվանդության պատմությունը, մարմնի կազմվածքը եւ այլն:

ԸՆՏԱՆԻՔ

# ՈՒՇ ՀԱՅՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎՏԱՆԳԸ



***Մի փեսական հոդվածում կարդացի, որ փարիքով մեծ հայրեր ունեցող երեխաները աչքի են ընկնում զարմանալի ունակություններով: Թեպետ, մեկ այլ կարծիքով, ուշ հայրությունը բավական լուրջ վտանգ է ներկայացնում: Այս փեսակետներից ո՞րն է իրափեսականը:***

***Ա.Միրզոյան***

***Թբիլիսի***

Հետազոտողների միջազգային խումբը պարզել է, որ 35 եւ ավելի բարձր տարիքում հայրությունը բացասաբար է ազդում սերնդի վերարտադրողական ունակության վրա: Գիտնականների հոդվածը հրապարակված է Proceedings of the Royal Society B հանդեսում: Այդ մասին հաղորդվում է Phys.org կայքի մամուլի տեղեկագրում:

Մասնագետները վերլուծել են մարդկանց առողջական վիճակի, նրանց ծնված երեխաների քանակի եւ մահվան տարիքի վերաբերյալ տվյալները: Ընտրանքը ներառել է 1,4 միլիոն մարդու Կանադայից, Գերմանիայից եւ Շվեդիայից, որոնք ապրել են 1670-ից մինչեւ 1850 թվականը, ինչպես նաեւ 1932 թվականից հետո: Ըստ որում հաշվի են առնվել նաեւ այնպիսի գործոններ, ինչպիսիք են մայրերի տարիքը, ինչպես նաեւ շրջակա միջավայրի աղտոտումը նյութերով, որոնք ներգործում են վերարտադրողական ունակության վրա: Գիտնականների կարծիքով, այդ արդյունքները բացատրվում են նրանով, որ սերմնահեղուկում տարիքի հետ կուտակվում են մուտացիաներ: Իր հերթին, դա ազդում է հաջորդ սերնդի՝ երեխաներ ունենալու ունակության վրա: Այլընտրական բացատրությունն այն է, որ ուշ հայրությունը նպաստում է ժառանգների հետ տղամարդկանց ավելի պակաս կապվածությանը, ինչը, իր հերթին, նվազեցնում է որդիների եւ դուստրերի՝ երեխա ունենալու ցանկությունը:

ԲՆՈՒԹՅՈՒՆ

# ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ. ԻՆՉՈ՞Ւ ԵՆ ԱՅՍՔԱՆ ՇԱՏ

***Դատելով զանգվածային լրատվամիջոցների հաղորդագրություններից՝ աղետները չափազանց շատացել են. այնպիսի տպավորություն է, թե դրանք տեղի են ունենում մեկը մյուսի հետեւից: Այսօր ավելի շատ մարդ է մահանում աղետներից, քան առաջ: Աղետների ժամանակ համաճարակների ուսումնասիրությամբ զբաղվող մի կենտրոն (Բելգիա) տեղեկացնում է, որ միայն 2010թ.-ին տեղի է ունեցել 373 աղետ եւ զոհվել է առնվազն 296000 մարդ:***



Անցած մի քանի տասնյակ տարիների համեմատ՝ արձանագրված աղետների թիվը զգալիորեն մեծացել է: Համեմատենք: 1975-1999թթ.-ին ամեն տարի տեղի ունեցած աղետների թիվը շատ հեռու էր 300-ից: Բայց 2000-2010թթ.-ին աղետների տարեկան միջին թիվը բավական մոտ էր 400-ին: Հավանաբար, դուք էլ այն մարդկանցից եք, ովքեր ուզում են իմանալ. «Ինչո՞ւ են մեր օրերում աղետներն այսքան շատ»:

Թեեւ մարդիկ հաճախ այդպիսի աղետները վերագրում են Աստծուն, բայց դա ամենեւին էլ չի համապատասխանում իրականությանը: Աստված չէ մերօրյա սարսափելի աղետների պատճառը: Այդուհանդերձ, Աստվածաշնչում իրոք կանխագուշակվել է, որ մեր ժամանակներում աղետներ են լինելու: Օրինակ՝ Մատթեոս 24:7, 8 համարներում կարդում ենք Հիսուսի հետեւյալ խոսքերը. «Տեղ-տեղ սովեր ու երկրաշարժեր կլինեն: Սակայն այս ամենը ցավերի սկիզբն է»: Ինչո՞ւ Աստծու Որդին մարգարեացավ, որ նման իրադարձություններ են լինելու, եւ ի՞նչ նշանակություն ունեն դրանք մեզ համար:

Այս խոսքերն ասելով՝ Հիսուսը պատասխանում էր հետեւյալ հարցին. «Ո՞րն է լինելու.... աշխարհի վախճանի նշանը» (Մատթեոս 24:3): Նա խոսեց ապագայում տեղի ունենալիք մի շարք բաների, այդ թվում նաեւ այնպիսի աղետների մասին, որոնք հիշատակվեցին վերեւում: Հետո Քրիստոսն ասաց մի շատ ուշագրավ խոսք. «Երբ տեսնեք այս բաները կատարվելիս, իմացեք, որ Աստծու թագավորությունը մոտ է» (Ղուկաս 21:31): Փաստորեն, այն, որ մեր օրերում տեղի են ունենում նման աղետներ, ինչ-որ բան է մեզ հուշում. շատ շուտով մեծ փոփոխություններ են լինելու:

Շատերը, այնուամենայնիվ, գուցե հարցնեն. «Եթե Աստված չէ աղետների պատճառը, ապա ո՞վ է կամ ի՞նչն է»: Այս հարցի պատասխանը կարող ենք հասկանալ միայն այն դեպքում, եթե ընդունենք հետեւյալ ճշմարտությունը, որը գրված է Աստվածաշնչում. «Ամբողջ աշխարհը Չարի իշխանության տակ է» (1 Հովհաննես 5:19): Այս համարը ցույց է տալիս, որ Աստված չէ պատասխանատու աշխարհի վատթարացող վիճակի համար. մեղավորը շատ դեպքերում նրա թշնամին է՝ «Չարը», որն Աստվածաշնչում այլ կերպ կոչվում է «Բանսարկու» եւ «Սատանա» (Հայտնություն 12:9, 12):

Մտածելով միայն սեփական անձի մասին՝ Աստծու այս թշնամին մարդկանց դիտում է ինչպես մեկանգամյա օգտագործման առարկաների: Քանի որ ամբողջ աշխարհը իր իշխանության տակ է, նա մարդկանց մեջ տարածում է իր հատկությունները, եւ Աստվածաշունչն էլ է ասում, որ «վերջին օրերում» մարդիկ լինելու են «անձնասեր, փողասեր, մեծամիտ, գոռոզ» (2 Տիմոթեոս 3:1, 2): Ուստի զարմանալի չէ, որ Սատանան ստեղծել է մի համաշխարհային համակարգ, որը հիմնված է այսպիսի եւ ուրիշ ոչ աստվածահաճո հատկությունների վրա: Նա խրախուսում է եսասիրաբար եւ ագահորեն շահագործել երկրի բնական ռեսուրսները, ինչը հաճախ վտանգավոր դրության մեջ է դնում մարդկանց:

Ինչպե՞ս է ագահությամբ տոգորված այդ համակարգը նպաստում աղետներին: Համաշխարհային աղետների վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության մի զեկույցում ասվում է. «Բավական շատ են այն վայրերը, որտեղ ջրհեղեղի վտանգ կա եւ որտեղ բնակչությունը խիտ է: Բացի այս, անտառների եւ ճահճոտ տարածքների վերացումը վնասում է շրջակա միջավայրի՝ վտանգներին դիմադրելու կարողությանը: Սակայն շատ ավելի վտանգավոր են համաշխարհային կլիմայի փոփոխությունը եւ ծովի մակարդակի բարձրացումը, որոնք տեղի են ունենում ջերմոցային գազերի կուտակման՝ մարդու գործունեության հետեւանքով»: Թեեւ ասում են, որ այդ «մարդկային գործունեությունը» տնտեսական առաջընթացի համար է, սակայն իրականում դրա հետեւում ընկած են եսասիրությունն ու ագահությունը, հատկություններ, որոնք տիրապետող են դարձել աշխարհում:

## ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Տղամարդիկ խոսում են ուտելուց հետո, կանայք՝ ուտելու ընթացքում;

* * *

Երբ խորամանկ է տղամարդը, ապա նա սրիկա է, իսկ երբ խորամանկ է կինը՝ նա իմաստուն է:

* * *

Ամուսնալուծված տղամարդը ազատ է, ամուսնալուծված կինը՝ միայնակ:

* * *

Տղամարդիկ չեն սիրում սերն առանց սեքսի, կանանց՝ սեքսը առանց սիրո:

* * *

Տղամարդիկ պլանավորում են, կանայք երազում:

* * *

Տղամարդիկ թաքցնում են իրենց եկամուտը, կանայք՝ տարիքը:

* * *

Տղամարդիկ սիրում են աչքերով, կանայք՝ ականջներով:

* * *

Տղամարդիկ չեն կարող հանդուրժել դատարկ շշերը եւ գրպանները, կանայք՝ դատարկ սառնարանն ու դատարկ փոստարկղը:

* * *

*Այսքան հակասության մեջ ունենք նաեւ ընդհանրություններ: Մենք բոլորս փնտրում ենք մեր երկրորդ կեսին: Եվ բոլորս ուզում ենք լինել երջանիկ եւ հասկացված: Թող մեկը սիրի աչքերով, մյուսը՝ ականջներով, բայց սիրո օրգանը երկուսի մոտ էլ սիրտն է: Այնպես որ, սիրեք միմյանց անկախ ամեն ինչից;*

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Կինը՝ ամուսնուն.*

*- Ի՞նչ ես կարծում, գուցե իրար դավաճանենք, որ մի քիչ աշխուժանա մեր տխուր ամուսնական կյանքը:*

*- Անիմաստ է, ես արդեն մի քանի անգամ փորձել եմ:*

*☺ Կինը՝ ամուսնուն.*

*- Կոտլետ կուտե՞ս:*

*- Կուտեմ:*

*- Միս չկա:*

*- Ի՞նչ արած, չեմ ուտի:*

*- Չեմ հասկանում, քեզ դուր չի՞ գալիս, ոնց եմ ես պատրաստում:*

*☺ - Աղջիկս, էդ տղան մանկուց որբ ա, կաղ ա: Մի ամուսնացի իրա հետ:*

*- Մամ, ինձ պետք չի ոչ մի «գեղեցիկ ասպետ»:*

*- Ախր ես էդ մասին չեմ ասում: Խեղճը արդեն ահագին տուժել ա էս կյանքից:*

*☺ - Սիրելի'ս, ես հիմա շատ կատաղած եմ: Չհարցնես, թե ինչու:*

*- Լավ:*

*- Ըհը խնդրեմ, դու միշտ ամեն ինչի վրա թքած ես ունեցել:*

*☺ Եթե ես ասում եմ, որ քո հետ ինձ շատ լավ եմ զգում, դա չի նշանակում, որ առանց քեզ վատ եմ:*

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ 26 ՏԱՐԵԿԱՆ Է

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի ազգային տոնացույցի կարեւորագույն այս տոնի «հիմնադրմանը» նախորդել էր 1990 թվականի օգոստոսի 23-ը. օր, երբ սկիզբ դրվեց անկախ պետականության հաստատման գործընթացին: Հայաստանի նորընտիր Գերագույն խորհուրդն իր առաջին նստաշրջանի ժամանակ ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը: Դրանով հանրապետության խորհրդարանն ազդարարեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը: Հռչակագրի ընդունումից անմիջապես հետո՝ օգոստոսի 24-ին, ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանել Հայաստանի Հանրապետություն, իսկ գործող տասներկուերորդ գումարման Գերագույն խորհուրդը համարել Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհուրդ:

Նորանկախ Հայաստանի առաջին սահմանադրությունն ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, համաժողովրդական հանրաքվեի արդյունքում: Գործող սահմանադրությունն ընդունվել է 2005թ. նոյեմբերի 27-ին՝ դարձյալ համաժողովրդական հանրաքվեի արդյունքում: Հայաստանի Հանրապետության դրոշը եռագույն է, նորանկախ Հայաստանի զինանշանը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության (1918-1920թթ.) զինանշանը, որի հեղինակներն են ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը եւ նկարիչ Հակոբ Կոջոյանը: Հայաստանի օրհներգը եւս Հայաստանի առաջին Հանրապետության օրհներգն է: Տեքստի հեղինակը Միքայել Նալբանդյանն է, երաժշտությունը հեղինակել է Բարսեղ Կանաչյանը:

Սեպտեմբերի 21-ն ազգային հպարտության օր է. անկախ հայրենիք ունենալու հայ ժողովրդի դարավոր երազանքը 26 տարի է՝ այլեւս իրականություն է:

Անկախության օրվա առթիվ Հայաստանի նախագահին շնորհավորական ուղերձներ են հղել Վրաստանի վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը, ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, Չինաստանի նախագահ Սի Ծինփինը, Նորին Մեծություն Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության թագուհի Էլիզաբեթ Երկրորդը, Նորին Սրբություն Հռոմի Պապ Ֆրանցիսկոսը, Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեն, տարբեր երկրների ու կառավարությունների ղեկավարներ:

# «ՑՅՈՒՐԻԽՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼՈՒ ԵՆ ԱՌ ՈՉԻՆՉ»

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 72-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

*Սեպտեմբերի 19-ին ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 72-րդ նստաշրջանում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարեց, որ Հայաստանը Հայոց ցեղասպանության ճանաչումը երբեք նախապայման չի դարձրել Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունները կանոնակարգելու համար:*



- Հենց Հայաստանի նախաձեռնած գործընթացի շնորհիվ 2009 թվականի հոկտեմբերին կնքվեցին Ցյուրիխյան արձանագրությունները:

Այդ փաստաթղթերն առ այսօր չեն վավերացվել եւ հանգրվանել են պաշտոնական Անկարայի մութ գզրոցներում: Թուրքիայի կառավարությունը անհեթեթ նախապայմաններ է առաջ քաշում դրանք վավերացնելու համար, որոնք բնավ չեն բխում արձանագրությունների տառից եւ ոգուց: Այդ ամենի հանդեպ հայ ժողովրդի հստակ վերաբերմունքը ես արտահայտեցի երեք տարի առաջ՝ այս բարձր ամբիոնից:

Այժմ եկել է լրացուցիչ պարզաբանում տալու ժամանակը,- հայտարարեց Սերժ Սարգսյանը: Նա ընդգծեց, որ Թուրքիայի ղեկավարությունը սխալվում է, եթե մտածում է, որ ինքը կարող է առհավետ պատանդ վերցնել այդ փաստաթղթերը եւ վավերացնել միայն իրեն հարմար առիթով:

- Արձանագրությունները բանակցվել են ներկայիս պայմաններում՝ առկա խնդիրներին լուծում գտնելու համար: Դրանց կենսագործման ուղղությամբ շարունակաբար որեւէ դրական տեղաշարժի բացակայության պայմաններում Հայաստանը այդ երկու արձանագրությունները հայտարարելու է առ ոչինչ: Մենք 2018 թվականի գարուն ենք մտնելու առանց այդ, ինչպես, ցավոք սրտի, փորձը ցույց տվեց, սին արձանագրությունների:

Հայաստանը, այնուամենայնիվ, շարունակում է համոզված լինել, որ յուրաքանչյուր երկու հարեւան պետություններ պարտավոր են հիմնել եւ վայելել կանոնավոր հարաբերություններ՝ իրենց միջեւ հնարավոր բոլոր տարաձայնությունները քննարկելու եւ դրանց լուծումները գտնելու նպատակով,- ընդգծեց Սերժ Սարգսյանը:

# ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈԼՈՐԻՍ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է՝ ԱՆԿԱԽ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Համաժողովը ներածական խոսքով բացեց Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Ապա համաժողովի մասնակիցներին իր օրհնության եւ բարեմաղթության խոսքը հղեց Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը:

Համաժողովի մասնակիցներին ողջունեցին ու արդյունավետ աշխատանքի մաղթանքի խոսքով դիմեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը:

Համաժողովի քննարկմանը ներկայացվեցին հետեւյալ չորս թեմաները. «Հայաստանի զարգացման գլխավոր խնդիրները», «Հայաստանի պաշտպանության քաղաքականության առանձնահատկությունները՝ ներկայիս մարտահրավերների պայմաններում», «Արտաքին քաղաքականության օրակարգը» եւ «Հայապահպանության հիմնական խնդրները»:

Սեպտեմբերի 20-ին ամփոփվեցին Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողովի աշխատանքները, մասնակիցները հանդես եկան հայտարարությամբ:

Համաժողովի մասնակիցները, լիագումար նիստի ավարտից հետո, քննարկումները շարունակեցին թեմատիկ հանդիպումներով:

Համաժողովի եռօրյա աշխատանքի ընթացքում՝ Հայաստան-Սփյուռք համաժողովի մասնակիցները հանդիպումներ ունեցան Հայաստանի վարչապետ Կարեն Կարապետյանի, Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի, արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանի, պաշտոնատար այլ անձանց հետ: Մասնակիցների հետ հանդիպում ունեցավ նաեւ համաժողովի պատգամավոր, Թուրքիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր Գարո Բայլան:

Համաժողովի ավարտին՝ ամփոփիչ խոսքով ելույթ ունեցավ Հայաստանի Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա առանձնակի ընդգծեց համաժողովի մասնակիցների եռօրյա արդյունավետ աշխատանքը, նշելով, որ ներկայացված բոլոր առաջարկությունները, դիտողություններն ու հանձնարարականները հատուկ հանձնաժողովը ի մի կբերի եւ կներկայացնի Հայաստան-Սփյուռք խորհրդի քննարկմանը:

Հայրենիք-Սփյուռք համահայկական 6-րդ համաժողովի մասնակիցների հայտարարության տեքստը ներկայացրեց ՀՕՄ-ի կենտրոնական վարչության անդամ Ալեսյա Բեջանյանը (Հայաստան):

# ՀԱՍՏԱՏՎԵՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*Հայաստանի կառավարությունը հաստատեց Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը:*

Ծրագրով նախատեսվում է վարկավորման պայմանների սահմանումն ըստ վարկավորման ուղղությունների, վարկավորման մեխանիզմների, սուբսիդավորման ձեւի ու չափի հստակեցում: Սահմանամերձ համայնքների գյուղացիներին սուբսիդավորված վարկերը կտրամադրվեն 23 տոկոսով, իսկ մյուս համայնքների բնակիչներին՝ 5 տոկոսով:

Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգի համաձայն, երկրում 2011թ. ապրիլի 1-ից իրականացվել է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Տրամադրվել են հայկական դրամով 14 տոկոս տոկոսադրույքով վարկեր՝ մինչեւ 3 մլն դրամ գումարով 2 տարի մարման ժամկետով: Սուբսիդավորվել է վարկերի տոկոսադրույքի 4 տոկոսային կետին, իսկ հանրապետության առավել կարիքավոր թվով 225 համայնքների վարկառուների վարկերի տոկոսադրույքի 6 տոկոսային կետին համարժեք մասը: 2015 թ.-ից բոլոր համայնքների համար սահմանվել է տոկոսադրույքների 6 տոկոսային կետին համարժեք մասի սուբսիդավորում: Ընդհանուր առմամբ, 2011թ. ապրիլի 1-ից մինչեւ 2017թ. հունիսի 30-ը տրամադրվել է շուրջ 127,5 հազար միավոր վարկ 106,4 մլրդ դրամ գումարով: Սուբսիդավորված գումարը կազմել է շուրջ 5,1 մլրդ դրամ:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Սեպտեմբերի 21-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, Հայաստանի անկախության 26-րդ տարեդարձի առթիվ, այցելելով «Եռաբլուր» զինվորական պանթեոն եւ հարգանքի տուրք մատուցել իրենց կյանքը Հայրենիքի անկախության համար զոհաբերած հայորդիների հիշատակին: «Եռաբլուր»-ին այցելել են նաեւ Ն.Ս.Օ.Ս.Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ եւ Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսները, Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը, Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանը, վարչապետ Կարեն Կարապետյանը, օրենսդիր եւ գործադիր մարմինների այլ ներկայացուցիչներ: Քաղաքական եւ հոգեւոր առաջնորդները ծաղիկներ դրեցին Վազգեն Սարգսյանի եւ Անդրանիկ Օզանյանի շիրիմներին, այնուհետ Պատվո պահակախմբի ուղեկցությամբ Հայաստանի նախագահը ծաղկեպսակ դրեց արցախյան հերոսամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանին:*

## ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆԸ՝ ԲԱՔՎՈՒՄ, ԵՎՐԱՆԵՍԹ ԽՎ-Ի ՀԱՄԱԺՈՂՈՎՈՒՄ

*Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության ղեկավար, Ազգային ժողովի արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Աշոտյանը Բաքվում մասնակցել Եվրանեսթ ԽՎ-ի համաժողովին:*

*Արմեն Աշոտյանը, խոսելով Եվրանեսթ ԽՎ-ի համաժողովին մասնակցելու որոշման մասին, ընդգծել, որ Եվրանեսթ ԽՎ-ն (ԵՄ Արեւելյան գործընկերության բաղկացուցիչ մասն է կազմում, ներխորհրդարանական ֆորում է, որում Եվրախորհրդարանի եւ Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի ազգային խորհրդարանների ներկայացուցիչներն են) Հայաստանի համար կարեւոր հարթակ է: «Հայաստանը պատրաստվում է Եվրամիության հետ նոր համաձայնագիր կնքել: Բացի այդ, մենք ժամանել ենք այստեղ՝ թույլ չտալու քարոզչություն եւ հակահայկական հռետորաբանություն մի միջոցառման ժամանակ, որին մասնակցում են նաեւ եվրոպացի պատգամավորները: Ցավոք, որոշ ելույթների ժամանակ թույլ է տրվել նման հռետորաբանություն: Սակայն պետք է հաշվի առնել, որ մենք այստեղ չենք ժամանել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը քննարկելու համար»,- ասել է Հայաստանի պատվիրակության ղեկավարը:*

*Անդրադառնալով ԼՂ հիմնախնդրի կարգավորմանը՝ Աշոտյանն ընդգծել է, որ խնդրի կարգավորման միակ օրինական ձեւաչափը ԵԱՀԿ Մինսկի խումբն է:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(22 սեպտեմբերի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է փարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 477,00 | 479,20 |
| ԵՎՐՈ | 5668,00 | 575,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,17 | 8,32 |

*Սեպտեմբերի 15-ի համեմատ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 0,5 դրամով:*

CyanMagentaYellowBlack



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ՎԵՐԱՕԾՎԵՑ ԴԱԴԵՇԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

***Սեպտեմբերի 16-ին Ախալքալաքիի Դադեշ գյուղում կայացավ իր առաջին օծումից տասնամյակներ անց հիմնովին վերակառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաօծման հանդիսավոր արարողությունը:***

Եկեղեցու վերաօծման արարողությունները սկսվել էին դեռեւս նախորդ օրվանից, երբ գյուղի երիտասարդությունը, ի նշան երախտագիտության, ծնունդով դադեշցի, այժմ ռուսաստանաբնակ Թումասյան ընտանիքին եւ Ռուսաստանի Դաշնությունից նրանց զորակցող հարազատներին եւ ընկերներին՝ իրենց համագյուղացու պատվին կազմակերպեցին ընդունելություն, մատուցվեց մատաղ:

Եկեղեցու վերաօծումը կատարվեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի ձեռամբ եւ Սամցխե-Ջավախեթիի ընդհանուր առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի մասնակցությամբ: Դռնբացեքի արարողությունից հետո՝ Սրբասուրբ մյուռոնով օծվեցին Սուրբ Սեղանը, Մկրտության ավազանը եւ 16 սյուները:

Եկեղեցական հանդիսավոր արարողությունը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Հենզել Մկոյանը, Սամվել Մանուկյանը եւ Դավիթ Ճիճինաձեն, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր Հայկ Բաբուխանյանը, Հայաստանի Հանրապետական կուսակցության փոխնախագահ Մուշեղ Լալայանը: Ներկա էին նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, եկեղեցու վերակառուցման, շինարարական եւ տարածքի բարեկարգման աշխատանքների կազմակերպիչներ Ալբերտ Մարանջյանը, Ռաֆիկ Սրմիկյանը, Կարեն Գրիգորյանը եւ Էդգար Կուրղինյանը:

ՓԱՌԱՏՈՆ

# ՍԱԻՐՄԵՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱՆԳՆԵՐՈՎ ԽՈՐՈՎԱԾԻ ՓԱՌԱՏՈՆ




***Թբիլիսիից 240 կմ հեռավորությամբ «Սաիրմե» հանգստավայրում առաջին անգամ անցկացվեց խորովածի փառատոն:***

Մասնակիցները Վրաստանի 9 ռեստորաններն էին, որոնք տարբեր բաղադրատոմսերով եւ միայն իրենց հատուկ ձեւավորմամբ ժյուրիի անձնակազմին, Հայաստանից ու Վրաստանից ժամանած հյուրերին, լրագրողներին հրամցրին խոզի, հորթի, ոչխարի, ճագարի եւ հավի մսով պատրաստված խորոված: Հատկանշական է, որ ժյուրիի կազմում Հայաստանում արդեն ավանդական դարձած Խորովածի փառատոնի կազմակերպիչ, «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ նախագահ Սեդրակ Մամուլյանն էր: Կազմակերպիչներից Թամիլա Մարեխաշվիլու խոսքով՝ նախաձեռնության նպատակներից էր նաեւ Սաիրմեի հրաշք բնությունն առավել ճանաչելի ու մարդաշատ դարձնել: Հաղթողները մի քանի անվանակարգի առաջատարներն էին, իսկ Գրան պրին շահեց «Մայիս» ռեստորանը: Այդուհանդերձ, ինչպես նշեց Մամուլյանը, հաղթողը ողջ Վրաստանն էր՝ իր բացառիկ համեղ խոհանոցով:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# «ԹԲԻԼԻՍՈԲԱ 2017»-Ը ԿԸՆԴԳՐԿԻ ՈՂՋ ՔԱՂԱՔԸ

Վրաստանի մայրաքաղաքի ավանդական տոնը՝ «Թբիլիսոբան», այս տարի կանցկացվի հոկտեմբերի 7-8-ին: Ինչպես հայտարարեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան, այն կընդգրկի ողջ քաղաքը, հիմնական միջոցառումները կանցկացվեն մայրաքաղաքի պատմական կենտրոնում՝ հին Թիֆլիսում, Ռիղեի զբոսայգում ու Լեգվտախեւի կիրճում:

«Թբիլիսոբայի» շրջանակներում, կանցկացվեն մշակութային ու մարզական տարբեր միջոցառումներ, հուշանվերների եւ գյուղմթերքների ցուցահանդես-վաճառք: Միջոցառումների շրջանակներում, կանցկացվեն փոքրիկների համար տոնական հանդեսներ:

# ՊԵԿԻՆԻ ՓՈՂՈՑԻ ՆՈՐ ՊԱՏԿԵՐԸ

***Վերանորոգումից հետո շահագործման հանձնվեց Վրաստանի մայրաքաղաքի ամենածանրաբեռնված տրանսպորտային երակներից մեկը՝ Պեկինի փողոցը:***



Այստեղ վերանորոգումից հետո, մոտ մեկ կիլոմետր երկարությամբ հայտնվել է հեծանվային հարթակ, փողոցում առանձնացված է նաեւ հասարակական տրանսպորտի եւ երթեւեկության տեղամաս, որից, անհրաժեշտության դեպքում, կկարողանան օգտվել նաեւ արտակարգ ծառայությունների ավտոմեքենաները: Չնայած նրան, որ Պեկինի փողոցի վրա տեղակայված են մեծ թվով խանութներ, ռեստորաններ, բանկերի մասնաճյուղեր եւ տարբեր կազմակերպությունների գրասենյակներ, մեքենաների կանգառների մեծ մասը վերացվել է: Փոխարենը՝ փողոցում հայտնվել են նստարաններ եւ հեծանիվների կանգառավայրեր:

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖՈՒՏԲՈԼԻ ԱՍՏՂԵՐԸ ԿԺԱՄԱՆԵՆ ԹԲԻԼԻՍԻ

***Սեպտեմբերի 29-ին, Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիան, VTB բանկի եւ «Աիսի» գարեջրի հետ միասին, մայրաքաղաքի «Դինամո Արենա» մարզադաշտում կանցկացնի բարեգործական «Համաշխարհային աստղերը Վրաստանի համար» հանդիպումը, որը կանցկացվի Վրաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի եւ համաշխարհային աստղերի միջեւ:***

Թբիլիսիում անցկացվող համաշխարհային աստղերի մասնակցության հանդիպման համար կժամանեն Ֆրանչեսկո Տոտին, Կարլես Պույոլը, Վիվալդոն, Դիդան, Անդրեյ Շեւչենկոն, Հավիեր Զանետին, Զվոնիմիր Բոբան, Սերժինիո, Պաուլո Մալդինին, Լուկա Տոնին, Էրնանդ Կրեսպոն, Գվենսան Կանդելան, Մարեկ Յանկուլովսկին, Ալեքսանդրո Կոստակուրտան, Դեմետրիո Ալբերտինին, Դինո Բաջոն, Մասիմո Ամբրոզինին, Մասիմո Օտտոն, Մարկո Դելվեկիոն, Սեբաստիան Ֆրեյեն, Անջելո Դի Լիվիոն, Կրիստիան Աբիատին, Սեբաստիանո Ռոսին, Ջուզեպպե Ֆավալին, Անջելո Կարբոնեն, Իվան Կորդոբան, Դարիո Շիմիչը, Իբրահիմ Բան, Պետրո Վերխովոդը եւ ուրիշներ:

Բարեգործական հանդիպումից ստացված գումարը կօգտագործվի Բորժոմիի տարածքում այրված անտառի վերականգնման համար: Հանդիպման տոմսերը վաճառվում են սեպտեմբերի 19-ից, օնլայն կարգով TKT GE կայքով: Հիմնականում տոմսերը կվաճառվեն 5 լարիով, վաճառքում կլինեն նաեւ 10, 15 եւ 25 լարի արժողությամբ տոմսեր:

# ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԸ՝ ԹԲԻԼԻՍՅԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉՈՒՄ

Թբիլիսում ընթացող աշխարհի գավաթի խաղարկությունում կայացած թայ-բրեյքի պարտիաներում Լեւոն Արոնյանը նախ՝ սեւ խաղաքարերով զիջեց Լագրավին, սակայն առավելության հասավ սպիտակներով: 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ արագ մրցախաղերը եւս ավարտեց ոչ-ոքի արդյունքով: Վերջին՝ «արմագեդոն» մրցափուլում Արոնյանը սպիտակ խաղաքարերով հաղթեց եւ դուրս եկավ եզրափակիչ:

Համաձայն ՖԻԴԵ-ի կանոնադրության՝ աշխարհի գավաթի խաղարկությունում 1-ին եւ 2-րդ հորիզոնականները զբաղեցրած շախմատիստներն իրավունք կստանան մասնակցելու հավակնորդների մրցաշարին: Ընդհանուր մրցանակային ֆոնդը կազմում 1 600 000 ԱՄՆ դոլար:



# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ակնկալիք: 7.Կարմիր, փափուկ մետաղ: 8.Խմբակային կրակոց: 11.Անգլիացի ֆիզիկոս, մաթեմատիկոս ... Նյուտոն: 15.«Ուժը հատած, բայց թոռան հետ նոր ուժ գտած»: 17.Գիտություն ժառանգության մասին: 19.Սպառազեն, հրացանակիր: 21.Բրազիլացի ֆուտբոլիստ: 22.Իտալական ծագումով բելգիացի շանսոնիե Սալվատորե ...: 25.Բուխարեստի լեզուն: 27.Հյուսնի գործիք: 28.Ճապոնական էլեկտրոնիկայի ֆիրմա: 33.Շատախոս երեխա: 34.Բրիտանացի ջութակահարուհի ... Մեյ: 35.Թիվ, խազ: 36.Գետ Ռուսաստանում: 37.Լրագրության հիմնական ժանրերից: 40.Սրճարան: 41.Թմրաքուն: 42.Վրաց Բագրատիոնի տոհմի թագուհի, ում օրոք Վրաց թագավորությունը հասել է հզորության ու ծաղկման գագաթնակետին: 45.Ամենաքաղցրը եւ ամենադառը: 46.Հայոց Բագրատունի տոհմի թագավոր: 47.Արձան: 48.Ավստրիացի նշանավոր կոմպոզիտոր Վոլֆգանգ Ամադեուս ...:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ե՛վ քարտ, ե՛ւ վիրաբուժության կենտրոն: 3.Ստրուկների ապստամբության առաջնորդ Հին Հռոմում (մ.թ.ա. 74-71թթ.): 4.Յանի թե: 5.Կարողություն չունեցող: 6.Սպորտային գույք: 9.Զբոսայգի, պուրակ: 10.Գեղեցիկ սեռի ներկայացուցիչ: 12.Կահույքի մաս: 13.Սահմանափակ խելքի տեր մարդ: 14.Կարգ ու ...: 16.Անասունների բուժումով զբաղվող հիմնարկություն: 18.Թռչունների խումբ, տարմ: 20.Կառք վարող: 23.Ֆրանսիացի դերասան Ալեն ...: 24.Երկու տարբեր ցեղերի խաչավորումից առաջ եկած կենդանի կամ բույս: 26.Իրոք, իսկապես: 27.Կանադացի նկարիչ ... Գոնսալվես: 29.Ոչ իրազեկ, անտեղյակ: 30.Քաղաք Իսպանիայում: 31.Նյարդ: 32.Կրակի պեծ (խսկց.): 36.Կտուր: 37.Կիլիկիայի հայ թագավոր: 38.Դեմ-...: 39.Հողատեր, կալվածատեր: 40.Զովացուցիչ ըմպելիք: 43.Քաղաք Նիգերիայի հարավում, համանուն գետի ափին: 44.Այստեղ (բրբ.):

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Արագվի: 5.Ակոս: 9.Ոմանք: 10.Մասուր: 12.Վրան: 13.Արիզոնա: 16.Մոնա: 17.Նվաստ: 19.Ամա: 20.Ենք: 22.Իվանե: 27.Որ: 28.Նա: 30.Տապան: 31.Ար: 32.Աստղ: 35.Տիղմ: 38.Արարք: 39.Նվարդ: 41.Ոստխ: 43.Ակն: 44.Սուտ: 45.Դմ: 46.Պիցցա: 49.Նիկա: 50.Գեա: 51.Դանիա: 53.Ազատ: 54.Ավո: 55.Լորկե: 56.Ղանթար: 58.Նու: 59.Ես: 60.Սողանք:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Գուսան: 3.Իորի: 4.Անան: 6.Կորեա: 7.Սենատ: 8.Ժուկով: 10.Միմինո: 11.Ուրարտու: 14.Զավեն: 15.Անմիտ: 18.Վավա: 21.Քրիս: 23.Ապարան: 24.Նար: 25.Են: 26.Պետրոս: 29.Աղիք: 32.Աշոտ: 33.Տա: 34.Ղրիմ: 35.Տրապիզոն: 36.Մնաց: 37.Աղամամուբ: 40.Վկա: 42.Սունավա: 45.Դիանա: 47.Իկարուս: 48.Ցատկ: 49.Նալ: 50.Գարուն: 51.Դաղձ: 52.Նոնա: 57.Րե:

Խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445